սաղ, ոմանք մանղիլ, ոմանք ասպարէզ, ոմանք աղաջ և այլն, այս և այլ նման սոցայ հաւաստին կայ 'ի բառն հայոց անթերի, և ոչ միայն յինէն անծանօթ նաեւ ոչ գտի ոք 'ի մէնջ մեր 'ի ժամանակի կենաց իմոց, որում ունիցէր Շնորհս այս, զի տացէր դաս իմոյս անկարութեան, այլ ես ոչ երկբայիմ որ 'ի միջի մեր գոն բազումք աշխատասէրք և ընթերցողք և հմուտ Հայոց բառբառաց ով ոք որ իցէ, որ ելցէ և շարադրեսցի ամենայն անուանք չափ և կշիռ մերոյս բառիւ և լուս ածցէ վասն հեշտութեան ազգին իւրոյ յիշատակ նորայ գրուեսցի պատուելի ընդ մէջ մեր, այլ այսքան իմ յիշատակելս վասն բանիս միայնակ պատճառն իմոյ անկարութիւնն եղև, և ցանկութիւն սրտի իմոյ զօրեղագոյն քանթէ անկարութիւնն իմ՝ առաջեցայ ես այսպիսի հնարիւք առաջեցուցանել գործ իմ, և ով ոք ելցէ և մաքրեսցէ խառնիխուռ և բրդեալ անուանքն իմ դրեցեալ առ յայսմ առ 'ի հաւաստի բառբառ Հայոց պարտաւոր զիս առնէ, և ամենեքեան երախտիս նորայ մի մոռանայցեն մինչև յաւիտեան։

Նա ևս հարկաւոր է իմ ասել բարեկամք ընթերցողայ իմոց և հաստատել 'ի միտս ձեր, զի հաստատութիւն զամենայն զոր ինչ բանի 'ի յերեսս երկրի, որում կարէ կալ յաւիտեան, որ նոյն ինքն լինիցի իբր տեսարան 'ի ակն ամե-